69

ԷՐԵԲՈՒՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հաստատում եմ

Հոգաբարձուների
խորհրդի նախագահ՝ Ա. Մ. Քուշկյան

< _____> <_____> 202__ թ.

ԿԱՐԳ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԶԵՂՉՄԱՆ

1. Ուսանողների ուսման վարձի զեղչման գործընթացը իրականացվում է սույն կարգով:

2. Ուսման վարձի զեղչը Ակադեմիայի բյուջեի ծախսային մասում նախատեսված ֆինանսական միջոցների, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից ուսանողի ուսման վճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցումն է:

3. Ըստ Ակադեմիայի մասնագիտությունների Ակադեմիայի կողմից հատկացված ուսման վճարի զեղչերի փոխհատուցման քանակն անփոփոխ է:

4. Ուսման վճարի մինչև 20% զեղչ տրամադրվում է
   4.1. 1-ին կարգի հաշմանդամ ուսանողների
   4.2. Երկկողմանի ծնողազուրկ ուսանողներին

5. Սույն կարգի 4-րդ կետով նշված անձանց ուսման վարձի զեղչի վերաբերյալ փաստաթղթերը ձևակերպվում են և պարտադիր կերպով վերանայվում յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում:

6. Հաշվի առնելով ուսանողի սոցիալական վիճակը և բարձր առաջադիմության արդյունքները՝ ուսման վարձը կարող է զեղչվել հետևյալ կարգաիճակ ունեցող անձանց համար/Սահմանված կարգով վավերացված համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում/:
   6.1. Միակողմանի ծնողազուրկ ուսանողները - 10%
   6.2. Ակադեմիայում ընտանիքից 2 և ավելի սովորողի դեպքում – 10%
   6.3. Զոհված ազատամարտիկների երեխաներ - 10%

7. Սույն կարգի հանձայն ուսանողական բոլոր տեսակի զեղչերից օգտվելու համար դիմումներն ընդունվում են յուրաքանչյուր տարվա օգոստոսի 25-ից մինչև սեպտեմբերի 10-ն ընկած ժամանակահատվածում: Դիմումների ընդունման վերջնաժամկետի ավարտից հետո քննական կամ ստուգարքային պարտքեր ունեցող ուսանողների դիմումները ենթակա չեն քննարկման:

8. Հարգելի պատճառով /ակադեմիական արձակուրդ՝ առողջական վիճակի, զինծառայության մեկնելու կամ ուսանողական փոխանակման ծրագրերով արտասահման ուսումնառության գործուղվելու կապակցությամբ/ ուսումնառությունն ընդհատած ուսումնառողի վերականգնման դեպքում պահպանվում է նախկինում ունեցած ուսման վարձի զեղչման իրավունքը: